ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 18-Ա

ԲԱՂԻՇ ՓԱՇՈՅԻ ՎԱՆՅԱՆԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՄՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով և հաշվի առնելով Բ.Վանյանի դիմումը՝
Ո ր ո շ ու մ ե մ.

1.Բաղիշ Վանյանին 2022 թվականի հունվարի 26-ից նշանակել Թումանյան համայնքի Շամուտ բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնում:
2.Աշխատավարձը՝ըստ Թումանյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 10-Ա որորշան հավելվածով հաստատված պաշտոնային դրույքաչափի,աշխատաժամանակի ռեժիմը՝ հնգօրյա աշխատանքային շաբաթ՝երկու հանգստյան օրով, ամենամյա արձակուրդի տեսակը՝նվազագույն և լրացուցիչ (20+4 աշխատանքային օր տևողությամբ):
3.Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. հունվարի 25
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 10 հոդվածով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022թ. հունվարի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին >> N 121-Ա հրամանը՝
Որոշում եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը՝ համաձայն N 1,2,3,4,5,6,7,8,9,10,11,12,13,14,15,16,17,18,19,20,21,22,23 և 24 հավելվածների:

2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2021թ. հունիսի 24-ի «ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին» թիվ 61-Ա որոշման թիվ 1 հավելվածը, Թումանյան համայնքի ղեկավարի 2020թ. օգոստոսի 18-ի «ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին» թիվ 78-Ա որոշման թիվ 1 հավելվածը, Թումանյան համայնքի ղեկավարի 2018թ. օգոստոսի 7-ի «ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» թիվ 90-Ա որոշման թիվ 1,2,3,4,5,6,7,8,9,10,11,12,13,14,15,16,և17 հավելվածները, Դսեղ համայնքի ղեկավարի 2020թ. օգոստոսի 18-ի «ՀՀ Լոռու մարզի Դսեղի համայնքապետարան իաշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» թիվ 74-Ա որոշման թիվ 1,2,3,4,5 և 6 հավելվածները,Չկալով համայնքի ղեկավարի 2018թ. օգոստոսի 6-ի «ՀՀ Լոռու մարզի Չկալովի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» թիվ 5-Ա որոշման թիվ 1 ,2 և 3 հավելվածները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022 թ.հունվարի 25
ք.Թումանյան